ՀԱԿԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵԿԱՆ ԴԻՒՐԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՐՔԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԵՒՍ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ՝ ՆԱԽՔԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՒԱՐՏԸ[1]

Ռուբինա Փիրումեան

Կովկասի բազմազգ, բազմակրօն եւ բազմամշակոյթ բնակչութիւնը դեռ պատերազմի ցնցումներն էր ապրում: Այդ տարաբնոյթ բնակչութեան մէջ ի վերուստ գոյութիւն ունեցող անհանդուրժողականութիւնը պատերազմի ստեղծած քաոսային իրավիճակում աւելի էր շեշտաւորուել: Եղեռնից հազիւ ազատուած գաղթականներ իրենց ցաւն ու տառապանքը, հիւանդութիւնները, աղքատութիւնն ու թշուառութիւնն էին բերել աւելացնելու Կովկասի, մանաւանդ Երեւան նահանգի առանց այն էլ աննախանձելի վիճակին:

Իրավիճակը ծանր էր Ցարական Կայսրութեան ամբողջ տարածքում: Մայրաքաղաք Պետերբուրգում ծայր առած հակացար, հակակառավարութիւն ցոյցերը հաւաքական ընդվզումի, ապա՝ զանգուածային շարժումի էին վերածուել: Արդիւնքը՝ 1917-ի Փետրուար 23-ին (Մարտի 8-ին) պայթած համառուսական յեղափոխութիւնը, որի հետեւանքով գահընկեց եղաւ Նիկոլայ Բ. ցարը, կազմուեց Ժամանակաւոր Կառավարութիւն՝ Սահմանադրական-դեմոկրատ (Կադետ) կուսակցութեան ղեկավարներից՝ Իշխան Գիորգի Լվովի նախագահութեամբ:

Ի՞նչէր դրա արձագանքը Կովկասում: Դրական կեցուածք, ոգեւորութիւն, ապագայի մեծ ակնկալիքներ: Անդրկովկասի ղեկավարների ներկայացուցչական արտակարգ ժողովը, Սոցիալ-դեմոկրատ մենշեւիկ Նիկոլայ Չխէիձէի նախագահութեամբ, իր հաւատարմութիւնն էր յայտնել Ժամանակաւոր Կառավարութեանը: Կենտրոնի օրինակով սովետներ (խորհուրդներ) էին կազմուել: Ժամանակաւոր Կառավարութեան կողմից կազմուել էր Օզակոմ կոչուած Անդրկովկասի Յատուկ Կոմիտէն՝ որպէս Կովկասի ընդհանուր ղեկավար մարմին (1917, Մարտ 9/22), որի մէջ միակ հայ ներկայացուցիչ՝ Միքայէլ Պապաջանովը (Պապաջանեան) պիտի ասել, որ շատ էլ տեղեակ չէր հայութեան վերաբերող հարցերից. իսկ թաթար եւ վրաց ներկայացուցիչները շեշտուած ազգային կողմնորոշում ունէին[2]: Չմոռանանք, աւելացնելու, որ Կովկասում դեռեւս տիրական ներկայութիւն եւ թելադրող ուժ էին ցարական իշխանութիւնից մնացած ռուս պաշտօնեաները:

---

[1] Սոյն զեկոյցը մեծաւ մասամբ հիմնուած է նոյն հեղինակի *Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում 1917-1921* (Երեւան: Երեւանի Համալսարանի Հրատարակութիւն, 1997) աշխատութեան վրայ,: Այստեղ բերուած շատ հաստատումների եւ նկարագրութիւնների աղբիւրներն ու յաւելեալ մանրամասնութիւնները կարելի է գտնել այդ հատորի մէջ:

[2] Օզակոմը ժամանակի ընթացքում ցուցաբերեց մանաւանդ հայկական շահերը պաշտպանելու իր անկարողութիւնը: Դաշնակցութիւնը օգտագործելով իր ունեցած կապերը Ժամանակաւոր Կառավարութեան հետ կարողացաւ առնուազն Թրքահայաստանի հարցերում շրջանցել Օզակոմը: Վարչապետ Լվովի եւ արտաքին գործոց նախարար Միլիւկովի ստորագրած հռչակագրով (1917, Ապրիլ 26/Մայիս 9) Օսմանեան Կայսրութիւնից գրաւուած հողերի յատուկ կոմիսար նշանակուեց Զօր. Աւերիանովը եւ օգնական՝ Յակոբ Զաւրեանը:

Համառուսական յեղափոխութիւնը, այնուամենայնիւ, խաղաղութիւն չէր բերել Կովկասին: Ազգամիջեան անհանդուրժողականութիւնն ու իրար բախուող շահերից բխող միջ-կուսակցական հակամարտութիւնները շարունակում էին խառնակ իրավիճակում պահել տարածաշրջանը: Բեւեռացած այս մթնոլորտում, որոշ հատուածներ Կովկասը տեսնում էին որպէս Ռուսաստանի անբաժանելի մի մաս՝ առանց սահմանային բաժանումների: Մէկ այլ մասը պնդում էր որոշակի ազգային սահմաններով ազգային ինքնավարութեան տարբերակի վրայ, ի հարկէ՝ միշտ կապուած Ռուսաստանին: Այս ուղղութեան ջատագովն էր Հ.Յ. Դաշնակցութիւնը՝ գիտնալով հանդերձ որ Անդրկովկասի ազգագրական խառը բնակչութիւնը մեծ խոչընդոտ է, մանաւանդ՝ հայ-թաթարական սահմանների ճշտորոշման գործում: Այս հարցը քննութեան առարկայ դարձաւ Արեւելահայոց Համագումարում՝ 1917, Հոկտեմբեր 11-ին Թիֆլիսում գումարուած[3]: Ազգային սահմանների բաժանումներին համաձայն էին հայ իրականութեան մէջ գործող բոլոր քաղաքական ուժերը, բայց այդ հարցին կապուած դժուարութիւնները ի նկատի ունենալով, համագումարը ի վիճակի չեղաւ որոշում կայացնելու: Հայ բոլշեւիկները, ի հարկէ, բոյկոտի էին ենթարկել համագումարը: ՌՍԴԲ (Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատ Բոլշեւիկ) կուսակցութեան Թիֆլիսի Կոմիտէի քարտուղար Անաստաս Միկոյեանը 1917, Սեպտեմբեր 19-ին յայտարարել էր՝ «Հայ բուրժուազիայի հետ հայ պրոլետարիատի եւ գիւղացիութեան չքաւորութեան համաձայնողականութիւնն ու ազգային միաւորումը կը նշանակի դաւաճանել ինտերնացիոնալիստական պրոլետարական տակտիկային եւ ռեւոլիւցիային՝ ի հաճոյս հայ իմպերիալիստական բուրժուազիայի եւ նացիոնալիստական մանր բուրժուազիայի դաշնակցութեան պարտիայի գլխաւորութեամբ»[4]: Այնուամենայնիւ, այդ օրերին բոլշեւիկները Կովկասում շատ փոքր թիւ էին կազմում:

Մեծ էր հայ ղեկավարութեան յոյսը եւ մեծ աշխատանք էր տարւում թէ՛ Ժամանակաւոր Կառավարութեան եւ թէ Դաշնակից պետութիւնների մօտ, որպէսի նրանք գումարուելիք հաշտութեան խորհրդաժողովում հայկական շահերը պաշտպանեն եւ առաջ տանեն[5]: Յստակ էր Հ.Յ.Դաշնակցութեան եւ ընդհանրապէս ժամանակի

---

[3] Համագումարի պատկերը այսպէս է ներկայացնում Սիմոն Վրացեանը՝ մասնակիցների ընդհանուր թիւ՝ 203, Հ. Յ. Դաշնակցութիւն՝ 113, Ժողովրդական՝ 43, Սոցիալ-յեղափոխական՝ 23, Սոցիալ-դեմոկրատ (Մենշեւիկ)՝ 9, անկուսակցական՝ 7 եւ Արեւմտահայ Խորհրդի ներկայացուցիչներ: Տե՛ս Վրացեան Սիմոն, *Հայաստանի Հանրապետութիւն*, գ. տպագրութիւն, Թեհրան: տպարան «Ալիք», 1982, էջ 34:

[4] Տե՛ս *Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ ռեւոլիւցիան եւ սովետական իշխանութեան յաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, Երեւան: Հայկ. ՍՍՌ Ակադեմիայի Հրատարակութիւն, 1960, (այսուհետ «Հոկտեմբերեան») փաստաթուղթ թիւ 45, էջ 73-74: Նոյն ժամանակ տեղի էր ունենում նաեւ բոլշեւիկների առաջին շրջանային ժողովը Կովկասում ուր Ստեփան Շահումեանը առաջարկում էր «մարզերի աւտոնոմիա»՝ Կովկասը երեք մարզերի բաժանելով, ի հարկէ, առանց ազգային բաժանումների: Տե՛ս «Ստեփան Շահումեան», հատոր երրորդ (Երեւան, Հայաստան Հրատարակչութիւն, 1978), էջ 270:

[5] Պետերբուրգի Ժամանակաւոր Կառավարութիւնը որդեգրել էր Մարքսիստ տեսաբան Պլեխանովի տեսակէտը, ըստ որի՝ որքան էլ Ռուսաստանի համար կարեւոր էր պատերազմին օր առաջ վերջ տալը, այնուամենայնիւ, հաշտութեան համաձայնագիրը ստորագրելու էր Դաշնակիցների

ազդեցիկ հայ ղեկավարութեան պատկերացումը հայկական հողերի վարչական բաժանումների վերաբերեալ: Հայաստանը, Վրաստանն ու Թաթարստանը (այդ օրերին «Ազրբէյջան» անուանում գոյութիւն չունէր) պէտք է լինէին ինքնավար՝ Մեծ Ռուսաստանի մէջ ընդգրկուած, իսկ Թրքահայաստանը պիտի ազատուէր թրքական լծից եւ լինէր անկախ[6]:

Եւ այսպէս, Ժամանակաւոր Կառավարութեան մէջ կարեւոր պաշտօններ զբաղեցնող Ալեքսանդր Կերենսկիի համաձայնութեամբ հնարաւոր էր դարձել արտօնութիւն ստանալ համախմբելու ցարական բանակի հայ զօրականներին եւ դէպի կովկասեան ճակատ, թուրքերի դէմ ուղարկելու: Սա Ռոստոմի (Ստեփան Զօրեան, Հ.Յ.Դ. հիմնադիր անդամ) երազն էր: Նա պատկերացնում էր 150,000-անոց հայկական բանակ, որ պիտի կռուէր թրքական ճակատում: Ի հարկէ, այդ ծրագրի դէմ գործեց թաթարական ուժը, որ Բաքու-Թիֆլիս երկաթուղին իր հսկողութեան տակ առնելով, արգիլեց հայ բանակայինների շարժը դէպի կովկասեան ճակատ: Հայ ջոկատները այդպէս էլ մնացին Բաքւում արգելափակուած, ամենախղճալի դրութեան մէջ: Միւս կողմից, Ժամանակաւոր Կառավարութիւնը չկարողացաւ իր հեղինակութիւնը տարածել ու պառակտուեց: Բոլշեւիկները՝ Լենինի գլխաւորութեամբ նրա դէմ ուժեղ քարոզչութիւն էին տանում: Բոլշեւիկ գործիչներ (ագիտատորներ) էին ուղարկուել նաեւ Կովկաս: 1917-ի Ապրիլից արդէն բոլշեւիկ խլրտումներ էին սկսուել Երեւանի նահանգում[7]:

Անդրկովկասը բոլշեւիկեան յեղափոխութեան ցանցում

1917-ի Հոկտեմբեր 25-ին (Նոյեմբեր 7) Պետերբուրգի ռազմայեղափոխական կոմիտէն յայտարարեց բոլշեւիկեան յեղաշրջման եւ սովետական կառավարութեան ստեղծման մասին: Յաջորդ օրը ընտրուեց Սովնարկոմը (Ժողկոմսովետ), Լենինը՝ նախագահ, Տրոցկին՝ արտաքին գործերի եւ Ստալինը՝ ազգութիւնների կոմիսարներ: Սովնարկոմը գործի լծուեց իր բացարձակ տիրակալութիւնը հաստատելու նախկին ցարական կայսրութեան ամբողջ տարածքում[8]: Միջոցը՝ գրաւիչ խոստում-

---

հետ միասին: Տե՛ս Վրացեան Սիմոն, *Հին թղթեր նոր պատմութեան համար*, Բէյրութ: Տպարան «Մշակ», 1962, էջ 250. Տե՛ս նաեւ Suny Ronald Grigor, *The Baku Commune, 1917-1918*, Princeton: Princeton University Press, 1972, էջ 59-60:

6 *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 52:

7 «*Հոկտեմբերեան*», թիւ 5, 6, 7, 12, 13, 14, 15, 17 եւ մի շարք այլ փաստաթղթեր խօսում են այդ մասին:

8 Յատկանշական է Համառուսական Սահմանադիր Ժողովի վախճանը, որ ապացոյցն է բոլշեւիկեան գործելակերպի: 1918-ի Յունուար 18-ին Պետերբուրգում գումարուած երկրի այս բարձրագոյն մարմինը պիտի քննէր երկրի ապագայ գաղափարական եւ քաղաքական ուղղութիւնը եւ յարմար վարչակարգ տնօրինէր: Ամբողջ Ռուսաստանը այդ ժողովի որոշումներին էր սպասում: Սակայն, առաջին նիստում իսկ յստակ դարձաւ, որ բոլշեւիկները փոքրամանութիւն են, 703 պատգամաւորներից 168-ը միայն: Նորաստեղծ բոլշեւիկ վարչամեքենայի կարգադրութեամբ ժողովը ցրուեց՝ քանի որ արդիւնքը կարող էր վտանգաւոր լինել բոլշեւիկների համար: Տե՛ս Hovannisian Richard G., *Armenian on the Road to Independence, 1918*, Los Angeles: University of California Press, 1967, էջ 288, ծանօթ. թիւ 16: Այս թուերը George Brinkley-ի *The Volunteer Army and Allied Intervention*

ներ չարչարուած բանուորին ու գիւղացուն – խոստումներ որոնք, ի հարկէ, չէին իրագործուելու – հալածանք, ահաբեկչութիւն, սպանութիւն:

Բոլշեւիկեան յեղափոխութեան ալիքները Կովկաս էին հասել եւ աւելի շփոթի մատնել Կովկասի նորակազմ վարչամեքենան: Միայն Բաքուի Սովետն էր, որ անմիջապէս իր հաւատարմութիւնը յայտնեց Սովնարկոմին եւ ընդունեց Ստեփան Շահումեանի նշանակումը իբրեւ Կովկասի յատուկ կոմիսար: Բաքուն իր իւրայատուկ իրավիճակով Կովկասից կամ Թիֆլիսից անջատ քաղաքականութիւն էր վարում:

Այս զեկոյցի սահմաններից դուրս է Սովետներից անկախ եւ Ժողկոմսովետի դէմ, յոյսը Համառուսական Սահմանադիր Ժողովի յաջողութեան վրայ դրած, Կովկասում կազմուած նոր վարչամեքենայի՝ Կովկասեան Կոմիսարիատի, ապա հակաբոլշեւիկ յստակ ուղղութիւն ունեցող Սէյմի (Անդրկովկասեան Խորհրդարան) գործունէութեան քննարկումը[9]: Դուրս է նաեւ 1917-ի Դեկտեմբեր 31-ի Լենինի արձակած Թրքահայաստանի անկախութեան *դեկրետը*, որ իրականութեան մէջ դատարկ յայտարարութիւն էր, հայ բոլշեւիկների համար գովերգի առիթ, որ սակայն իրական գետնի վրայ անպտուղ պիտի մնար[10]: Յիշեցման արժանի է, սակայն, Հ. Յ. Դաշնակցութեան մօտիկ յարաբերութիւնը Կովկասի բոլշեւիկների հետ, որը պարադոքսալ երեւոյթ ունի: Հարցը այն է, որ Դաշնակցութիւնը նրանց համարում էր որպէս կենտրոնական իշխանութեան ներկայացուցիչներ եւ հաւատում էր, թէ նրանց միջոցով կարող է կենտրոնից հայկական հարցի համար բարենպաստ պայմաններ ապահովել: Դաշնակցութեան նպատակն էր հասնել Արեւմտահայաստանի անկախութեան. իսկ Անդրկովկասում հայութեան համար ձգտում էր ինքնավարութեան՝ կապուած կենտրոնական իշխանութեան հետ՝ ինչ տեսակ վարչակարգ էլ որ ունենար: Ստեփան Շահումեանը այդ օրերին համամիտ էր Թրքահայաստանի անկախութեան գաղափարին եւ խոստանում էր համոզել կենտրոնին՝ որոշ ռուս զօրամասեր կովկասեան ճակատի վրայ պահելու: Բայց Լենինի քաղաքականութիւնը այլ ուղղութիւն էր բռնել, որից հաւանաբար Շահումեանն էլ տեղեակ չէր:

Կովկասեան ռազմաճակատներում պարզուած իրականութիւնը հայելին էր այդ քաղաքականութեան: Լենինը փորձում էր ամէն գնով վերջ տալ պատերազմին. ուրեմն, բոլշեւիկեան յեղափոխութեան եւ Լենինի յորդորների արդիւնքում, ռուս զինուորները շարունակում էին աւելի մեծ թուերով լքել ճակատը, անտարբերութեամբ իրենց զէնքն ու զինամթերքը թողնել ու հեռանալ: Դրանց տէր էին դառնում վրացիներն ու թաթարները: Թաթարները նոյնիսկ յարձակւում էին ռուս զինուոր-

---

in South Russia, 1917-1921 (Notre Dame, Indiana: Notre Dame University Press, 1966) աշխատութեան մէջ նշուած են 707 եւ 175:

9 Կովկասեան Կոմիսարիատի դէմ կատաղի պայքար էին տանում բոլշեւիկները՝ Ստեփան Շահումեանի գլխաւորութեամբ: Այդ բերումով հալածանքի ենթարկուած Շահումեանը, որ դեռ չէր կարողացել Թիֆլիսից Բաքու մեկնել եւ իրեն վստահուած պաշտօնը ստանձնել, իր ոչ-բոլշեւիկ ընկերների օգնութեամբ փախուստ է տալիս եւ վերջապէս Բաքու հասնում 1918-ի Փետրուարին:

10 Որքան դիպուկ է պատերազմի օրերի ֆրանսացի լրագրող Հենրի Բարբիի հարցադրումը *դեկրետի* մասին. «Սա Լենինի եւ Ազգութիւնների Կոմիսարի պարզամտութի՞ւնն էր, տգիտութիւնը՞, թէ՞ ցինիզմը», տե՛ս Hovannisian Richard G., *Armenia on the Road to Independence,* էջ 100.

ների վրայ, կոտորում ու խլում էին զէնքերը[11]: Ըստ Կարօ Սասունու մի փոքրիկ բաժին էլ Կարսի, Ալեքսանդրապոլի եւ Երեւանի մէջ մնացած զէնք ու զինամթերքից հայերին էր հասնում[12]: Կովկասեան ռազմաճակատի պարպումով բացարձակապէս թուլացել էր Արեւմտահայաստանի պաշտպանութիւնը: Հայկական գումարտակները հազիւ վերակազմակերպուած դէմ պիտի դնէին օրեցօր կուտակուող եւ նոր գրոհի պատրաստուող թրքական բանակին եւ թուրք ու քուրդ յաճախակի ասպատակումներին եւ յարձակումներին[13]: Բոլշեւիկները Լենինի այս քայլը՝ կովկասեան ռազմաճակատի պարպումը բացատրելու կամ աւելի շուտ արդարացնելու համար էջեր լցրեցին: Բայց իրականութիւնն այն է, որ դա սկիզբը դրեց Արեւմտահայաստանի վերջնական վերացման: Իսկ Շահումեանը կովկասեան ռազմաճակատների պարպումը դիտում էր որպէս «կովկասեան նացիոնալիզմի ամենացաւալի հետեւանքը»[14]:

Արեւմտահայաստանի կորուստը աւելի ամրապնդուեց Լենինի մէկ այլ տարօրինակ քայլով: Ռուսաստանը պատերազմից դուրս քաշելու հապճեպով, առանց հաշտութեան խորհրդաժողովին սպասելու, Լենինը առանձնաբար բանակցութիւն սկսեց Գերմանիոյ հետ: Համաձայնագիրը ստորագրուեց 1918-ի Մարտ 3-ին, Բրեստ-Լիտովսկում: Իր առաջադրած նպատակին հասնելու համար Լենինի այս քայլը ցոյց էր տալիս բացարձակ անտարբերութիւն դէպի Հայկական Հարցը: Պատերազմի մտահոգութիւնից ազատուելով, Լենինը կոմունիզմի տարածման իր քարոզչական աշխատանքին զարկ պիտի տար, եւ առաջին հերթին հարեւան Թուրքիայում: Թուրքիոյ յեղափոխութիւնը դիւրացնելու համար պիտի չէզոքացուէր Դաշնակցութեան ուժը Թրքահայաստանում: Եւ վերջին հաշուով կարեւոր չէր հայը թէ թուրքը կլինի այդ հողերի տէրը:

Բանակցութիւնների ընթացքում, հայկական վեց վիլայեթների պարպումից եւ թուրքերին յանձնելուց բացի, Էնվերի եւ Թալեաթի պնդումների վրայ, Գերմանիան Թուրքիայի համար պահանջեց Կարսը, Արդահանը եւ Բաթումը: Համաձայնագիրը նաեւ պարտադրում էր Ռուսաստանին առանձին համաձայնագրեր ստորագրել Քառեակ Ձինակցութեան բոլոր անդամների հետ: Եւ այդ շարքում ռուս-թրքական համաձայնագիրը, ուր Ռուսաստանը համաձայնում էր նաեւ ցրել հայկական զօրախմբերը ամբողջ Անդրկովկասում եւ Թրքահայաստանում: Հետաքրքիր զու-

---

[11] Ըստ Երեւանի Ազգային Խորհրդի անդամ՝ բժ. Յովակիմ Մելիքեանի, յարձակումները աւելի էին շեշտուել երբ թաթար ներկայացուցիչները Կովկասեան Կոմիսարիատից իրենց բաժին զէնքն էին պահանջել եւ մերժուել էին: Նրանց ասուել էր, թէ թաթարները զէնքի պէտք չունեն քանի որ մերժել են Կովկասի պաշտպանութեանը մասնակցել:

[12] Սասունի Կարօ, *Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918)*, Բոստոն, 1927, էջ 145:

[13] Կարօ Սասունի, *Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին*, Բէյրութ: «Սեւան» տպարան, 1966, էջ 158-62:

[14] Ստեփան Շահումեան, «Երկեր», երրորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1958, էջ 34: Նոյն տեղում նա խօսում է «անիծեալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարիւր հազարաւոր զոհերի» մասին, բայց աւելացնում, թէ թուրքերն ու քրդերն էլ դրանից պակաս վնասներ չեն կրել (էջ 37-38):

գաղիպութեամբ, նոյն ժամանակ երբ Ռուսաստանի եւ Քառեակ Զինակցութեան միջեւ բանակցութիւններ էին գնում, յոգնած թուրք բանակի հրամանատար Վեհիբ Փաշան ժամանակ շահելու համար զինադադարի առաջարկ էր ուղղում Կովկասի ռուս բանակի հրամանատարութեանը:

Լիպարիտ Նազարեանցը, որ Պետերբուրգում մօտ կապեր ունէր ղեկավարութեան հետ, վկայում է թէ, ի պատասխան Բրեստ-Լիտովսկի համաձայնագրի դէմ իր բողոքի, Տրոցկին ասել է, «Այո՛ ընկեր Լիպարի՛տ, դժբախտաբար ամէն ինչ այնպէս չի կարգադրւում, ինչպէս որ մարդ փափագում է: Ես ինքս ինձ դնում եմ ձեր դրութեան մէջ. Բրեստի դաշնագիրը դժբախտութիւն է ձեր ժողովուրդի համար, ու ես երջանիկ եմ, որ ինձ չվիճակուեց ստորագրել այն»[15]:

1918-ի Մարտ 15-ին, Համառուսաստանեան Սովետների չորրորդ արտակարգ համագումարում վաւերացուեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը: Նոյն համագումարում, Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատ Բոլշեւիկ կուսակցութիւնը վերակոչուեց Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութիւն:

Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը մեծ շփոթ առաջացրեց Անդրկովկասում, մանաւանդ՝ հայ ղեկավարութեան մէջ: Ռուբէնը վկայում է, թէ այս նոր իրողութեան լոյսի տակ երեք կարծիք էր շրջանառւում, ա. լինել թաթարների եւ վրացիների հետ, ուղղուել դէպի գեմանացիները եւ Թուրքիան. բ. դէմ լինել թուրքերին եւ հարեւաններին եւ յոյսը դնել Դաշնակիցների յաղթութեան վրայ. գ. դէմ լինել հարեւաններին եւ Դաշնակիցներին եւ յենուել Մոսկուայում ձեւաւորուած վարչամեքենայի, այսինքն՝ բոլշեւիկների եւ Կովկասում գործող նրանց բեկորների վրայ: Ի հարկէ, հենց Ռուբէնի վկայութեամբ այս ուղղութիւններից եւ ոչ մէկը միահամուռ չորդեգրուեցին, այլ՝ ղեկավարութիւնը փորձեց օգտուել բոլոր կարելիութիւններից[16]: Նկատի ունենանք նաեւ, որ այդ ժամանակ պարզ էր վրացի ղեկավարութեան դիրքորոշումը, այն է՝ բախտ չկապել դատապարտուած Հայաստանին եւ մօտենալ թուրքերին ու գերմանացիներին. իսկ թաթարները բնականաբար միանգամայն ուղղուած էին դէպի թուրքերը եւ նրանց քաջալերանքով անդադար ոտնձգութիւններ էին անում հայերի դէմ ու աւելի ամուր էին մնում հայկական հողերի վրայ:

Յամենայնդէպս, մի բան պարզ էր այլեւս. Թրքահայաստանն ու Թուրքիայում մնացած հայկական հողերը որեւէ կարեւորութիւն չունէին Բոլշեւիկ Ռուսաստանի վարած կովկասեան քաղաքականութեան մէջ: Այս անտարբերութիւնից օգտուելով, թուրք բանակը գրաւելով Էրզրումը եւ ճեղքելով Վանի, Խնուսի եւ Ալաշկերտի պաշտպանութիւնները՝ դէպի Կովկաս էր առաջանում՝ Բրեստ-Լիտովսկի իր բաժինը ստանալու:[17] Թուրքերը այլեւս կարիք չէին զգում Կովկասի իշխանութեան հետ կնքուած զինադադարին յաջորդող հաշտութեան բանակցութիւններ սկսելու քանի

---

[15] Նազարեանց Լիպարիտ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Խորհրդային իշխանութեան միջեւ համաձայնութեան փորձեր, տե՛ս «Դրօշակ», թիւ 8-9, 1928, Փարիզ, էջ 232:

[16] Ռուբէն, *Հայ յեղափոխականի մը յիշատակները*, Է հատոր, Լոս Անջելըս, «Հորիզոն» տպարան, 1952, էջ, 130-139:

[17] Hovannisian Richard G., *Armenia on the Road to Independence*, էջ 137: Ինչպէս Ռիչըրդ Յովհաննիսեանն է բնութագրում, Էրզրումի ճակատամարտը Արեւմտահայաստանի համար տարուած

արդէն կար Բրեստ-Լիտովսկի թրքամէտ համաձայնագիրը: Իսկ Կովկասի խորհրդարան՝ Սէյմում, հակառակ Նոյ Ռամիշվիլիի արտասանած ճառի, ուր նա ջատագովում էր հայ ժողովրդի իրաւունքները եւ յայտարարում, թէ «Տաճկահայկական հարցի լուծումով … ոչ նուազ չափով շահագրգռուած են Անդրկովկասի ժողովուրդները»[18], ո՛չ վրացի եւ ոչ էլ թաթար ներկայացուցիչները հետաքրքրութիւն ցոյց չէին տալիս թուրք բանակին դէմ դնելու եւ հայկական նոր կոտորածների առջեւն առնելու:

Ցեղասպանութիւնը շարունակւում էր: Մէկ անգամ էլ գաղթական դարձած արեւմտահայութիւնը սարսափահար դէպի հիւսիսային Կովկաս էր փախչում: Խուճապի էր մատնուել կովկասեան բանակը, յոգնած զինուորները փախչում էին: Թաթարները թիկունքում խլրտումներ էին կատարում՝ զինուորական դիմադրութիւնը ձախողեցնելու, արգիլում էին պարէնի մուտքը Երեւան եւ զինուորների անցումը դէպի ճակատ: Թաթարների այս խլրտումները Երեւան էին հասել. եւ եթէ չլինէր Արամ Մանուկեանի եւ Անդրկովկասի Կոմիսարիատի կողմից նշանակուած հայկական զօրքերի կոմիսար՝ Դրոյի (Դրաստամատ Կանայեան) քաղաքականութիւնը, Երեւանն էլ կուլ կը գնար: Այս իրավիճակին դէմ դնելու համար Հայոց Ազգային Խորհուրդը բացի ռազմական դիմադրութիւնից բանակցութիւններ էր վարում մի կողմից թուրքերի հետ – Արշակ Ջամալեանը Երզնկայում թուրք ղեկավարների հետ տեսակցելով փորձում էր հայ գաղթականների վերադարձը ապահովել – միւս կողմից՝ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան հետ – դարձեալ Արշակ Ջամալեան, Գեւորգ Մելիք-Ղարագեօզեանի եւ Լիպարիտ Նազարեանցի հետ: Իսկ յետագայում, երբ թուրք բանակը Ղարսն ու Արդահանը գրաւած շարունակում էր առաջանալ, Համօ Օհանջանեանը եւ Արշակ Ջամալեանը Բեռլինում փորձում էին համոզել գերմանացիներին միջամտելու եւ պարտադրելու թուրքերին Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը յարգել: Յարաբերութիւնները սերտ էին նաեւ Կովկասի հայ բոլշեւիկների հետ, մանաւանդ՝ անձնական գետնի վրայ – Սարգիս Խանոյեան, Դանուշ Շահվերդեան, Սարգիս Կասեան – յոյս ունենալով, որ նրանք հայկական շահերի օգտին կը բարեխօսեն Մոսկուայի ղեկավարութեան մօտ[19]: Իսկ ի՞նչ էր Մոսկուայի հակադարձը: Գրիգորի Չիչերինն ու նրա օգնական հայազգի Լեւոն Կարախանը Ապրիլ 13-ին Թիֆլիսի գերմանական հիւպատոսին յղած հեռագրով դիմում էին Գերմանիային ազդեցութիւն բանեցնելու Թուրքիոյ վրայ՝ դադարեցնելու համար հայ ժողովրդի դէմ սկսած նոր կոտորածը[20]:

Դէպքերը գահավէժ ընթացք էին ստացել: Թուրքերի հետ պատերազմը շարունակելու կամ Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը լիովին ընդունելու եւ մանա-

---

վերջին կռիւն էր, որով թուրքերը վերստին տիրանում էին ռուսների գրաւած հայկական վեց վիլայեթներին:

[18] Սէյմի այս նիստի արձանագրութեան թարգմանութիւնը տե՛ս ՀՀՊԿՊԱ ֆոնտ 222, ցուցակ 1, գործ 118:

[19] 1918, Մարտ 12-ին Ռուսաստանի մայրաքաղաքը Պետերբուրգից Մոսկուա էր փոխադրուել. իսկ 1918-ի Փետրուարին Ռուսաստանը նոր տոմարին էր անցել (Յուլեան օրացոյցից Գրիգորեան օրացոյց):

[20] «Հոկտեմբերեան», փաստատուղթ թիւ 144, էջ 211-212: Նաեւ՝ Հ.Յ.Դ. Արխիւ, Բոստոն, Մաս Դ., թղթածրար թիւ 1406, փաստաթուղթ թիւ 170:

ւանդ Բաթումը թուրքերի տիրապետութեան տակ թողնելու հարցերը մեծ հակամարտութիւններ էին առաջացրել Սէյմում: Այս պայմաններում, Սէյմի Ապրիլ 22-ի նիստում որոշուեց ընդունել Թուրքիոյ առաջարկը՝ Անդրկովկասը անկախ յայտարարել եւ բանակցութիւն սկսել թուրքերի հետ: Այստեղ յատկանշական է թաթար ներկայացուցիչ Ռասուլզադէի (Մեհմեդ Ամին) հետապնդած նպատակների դրսեւորումը: Սէյմի Ապրիլ 26-ի նիստին նա առաջարկում էր Դաղստանը եւս միացնել անկախ Անդրկովկասի տարածքին, այդպիսով՝ բոլշեւիկեան լծից ազատագրելու մահմեդականներին: Մեծն Թուրանի գաղափարը իրագործւում էր քայլ առ քայլ[21]: Մինչ կազմաւորւում էր Կովկասեան նորանկախ պետութիւնը, Չխենկելին անորոշ իրավիճակից օգտուելով այդ պետութեան անունից յայտարարում էր թուրքերին, որ թուրքերի պայմանները ընդունուած են եւ հրամայում էր զինուորական գործողութիւնները դադարեցնել: Չխենկելիի միահեծան եւ թրքամէտ գործունէութիւնը Կարսի անկման պատճառ դարձաւ: Կարսում տեղակայուած Զօր. Նազարբէկեանը յետագայում ցաւ էր յայտնում կամքից անկախ կառավարութեան հրամանը կատարած լինելու համար[22]:

Ի վերջոյ, Մայիս 11-ին սկսած Բաթումի հաշտութեան բանակցութիւններին, ուր հայութեան կողմից մասնակցում էին Յովհաննէս Քաջազնունին եւ Ալեքսանդր Խատիսեանը (նաեւ՝ Սիմոն Վրացեան եւ Մ. Բունեաթեան որպէս խորհրդականներ), թուրքերը Կարսից, Արդահանից եւ Բաթումից բացի արդէն պահանջում էին Ախալքալաքը, Ախալցխան, Սուրմալուն եւ Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի մի մասը: Բանակցութիւնները ձախող ընթացք էին ստացել, իսկ թուրք բանակը դէպի Երեւան էր շարժւում: Յստակ էր արդէն վրացիների թեքումը դէպի գերմանացիները եւ նրանց հետ տարած գաղտնի բանակցութիւնները: Անխուսափելի էր Սէյմի ցրումը, որին հետեւեց գերմանացիների հովանաւորութիւնը ստացած Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը: Ահա այն իրավիճակը, որի լոյսի տակ հայ ղեկավարութիւնը պարտադրուած էր անկախ Հայաստան յայտարարել եւ Բաթում շտապել թուրքերի արդէն հայրենակոլ վտանգին դիմակայելու համար: Դրան նախորդող օրերի Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի եւ Սարդարապատի հայկական սխրանքները բանակցութեան սեղանին էին բերել թուրքերին[23]: Բայց թուրքերի Բաքու հասնելու ծրագիրը դեռ հեռանկարում էր:

---

[21] Սէյմի Ապրիլ 26-ի նիստի արձանագրութիւնները տե՛ս Հ.Հ.Կ.Պ.Պ.Ա. ֆոնտ 222, ցուցակ 1, գործ 197:

[22] «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 113:

[23] Բաթումի համաձայնագիրը ստորագրուեց Յունիս 4-ին: Բանակցութիւնների մանրամասնութիւնները տե՛ս Ալեքսանդր Խատիսեան, *Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը*, բ. Հրատարակութիւն, Բէյրութ: Համազգայինի տպարան, 1968, էջ 85-94. իսկ համաձայնագրի եւ դրա երեք յաւելուածների բովանդակութիւնը՝ էջ 154-56: Համաձայնագրի պատճէնը ֆրանսերէնով, տե՛ս Հ.Հ.Կ.Պ.Պ.Ա. ֆոնտ 200, ցուցակ 1, գործ 12, էջ 2-13: Կովկասի եւ Թուրքիայի միջեւ առկախ մնացած հարցերը պիտի լուծուէին Պոլսում: Այդու՝ մինչեւ Նոյեմբեր ամիսը Ալեքսանդր Խատիսեանը, Աւետիս Ահարոնեանը եւ Միքայէլ Պապաջանեանը Բաթումի համաձայնագիրը բարեփոխելու համար ապարդիւն ջանքեր էին ի գործ դնում:

Հայաստանի անկախացումով որոշ չափով կասեցուեց կոտորածների յաճախանքը, ի հարկէ, եթէ հաշուի չառնենք հայկական հողին կառչած թաթարների ու թուրքերի շարունակական խլրտումներն ու ահաբեկչութիւնները: Հայերը աւելի մեծ վտանգի տակ էին մուսաւաթականների ձեւակերպած «Ազրբէյջան» կոչուած հանրապետութիւնում, ուր ապրում էին ցրուած: Թաթարներից կազմուած այս նորաստեղծ կուսակցութեան բուն նպատակը Ազրբէյջանը օտարներից մաքրելն էր: Սա թաթարների համար գրաւիչ գաղափարախօսութիւն էր, որ ենթադրում էր մաքրագործումներ եւ ջարդ եւ որ Մուսաւաթ կուսակցութեան շարքերը լցրեց: Մուսաւաթական հրահանգների շարքում էր նաեւ յարձակում ճակատից վերադարձող զինուորների վրայ, սպանութիւն եւ զէնքերի իւրացում:

Դէպի Բաքուի աշխատանքային կոմունայի ստեղծումը

Իւրայատուկ իրավիճակ ունէր Բաքուն: Անդրկովկասի այս միակ ճարտարարուեստականացած քաղաքում, ցարական կայսրութեան փլուզումից յետոյ, տիրում էր բանուորա-զինուորա-նաւաստիների խորհուրդը՝ Բոլշեւիկ փոքրամասնութեամբ: Այդ իրողութիւնն է արտացոլում 1918-ի Յունուար 1-ին գումարուած Պատգամաւորների Խորհրդի մօտաւոր պատկերը՝ 300 պատգամաւորներից 60-ը միայն բոլշեւիկներ, 50-ը ձախ սոցիալիստ-յեղափոխականներ, 45-ը աջ սոցիալիստ-յեղափոխականներ, 55-ը դաշնակցականներ, 52-ը մուսաւաթականներ եւ ուրիշներ[24]: 1917-ի վերջերից Բաքուում գործում էր նաեւ հայ Ազգային Խորհուրդը՝ Թիֆլիսի մարմնին ենթակայ: Կազմի անդամներն էին՝ Աբրահամ Գիւլխանդանեան, Խանասորի Վարդան, Կ. Պարունակեան, որին փոխարինեց Սարգիս Արարատեանը, Լեւոն Աթարբէկեան, Հայկ Տէր-Միքայէլեան, Ն. Տէր-Ղազարեան: Հրաւիրուեցին կազմին մասնակցելու Ռոստոմը, Յովհաննէս Քաջազնունին եւ բժիշկ Իսախանեանը: Խորհրդակցական ձայնով մասնակցում էին Զաբել Եսայեանը եւ Ռուբէն Քաջբերունին՝ որպէս արեւմտահայերի ներկայացուցիչներ: Կազմի համար որպէս քարտուղար աշխատում էր Ռուբէն Դարբինեանը՝ այդ ժամանակ՝ Ա. Չիլինգարեան[25]: Ռոստոմը Բաքու էր եկել բոլշեւիկեան յեղափոխութեան առաջացրած շփոթի մէջ ռուս բանակի հայ սպաներին եւ զինուորներին ի մի հաւաքելու եւ Ղարաբաղի ու Երեւանի ճամբով ռազմաճակատ ուղարկելու[26]: Բայց զինուած թաթարների յաճախակի յարձակումները խոչընդոտեցին ծրագիրը. նրանք նոյնիսկ երկաթուղին հսկողութեան տակ առնելով, արգիլեցին զինուորների փոխադրութիւնը: Այս

---

[24] Տե՛ս Սերգէյ Մելիք-Եօլչեան, «Բագուի հերոսամարտը», «Հայրենիք» ամսագիր. Գ. Տարի, թիւ 7, 1925: Հեղինակը, որպէս Հ.Յ.Դ. ներկայացուցիչ, եղել է անդամ Բաքուի Խորհրդի եւ նրանից բխած Գործադիր Մարմնի, որ ընտրուած էր հինգ մեծ կուսակցութիւնների ներկայացուցիչներից: Բաքուի Խորհրդի մասին այլ թուեր է ներկայացնում Ռանըլդ Սիւնին *The Baku Commune, 1917-1918* աշխատութեան մէջ: Նա նշում է երկու աղբիւր՝ բոլշեւիկների թիւը 48-ը 200-ի վրայ, կամ 51-ը 190-ի վրայ:

[25] «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 157: Կազմը ներկայացնում էր Դաշնակցութիւն, Ժողովրդական, Սոցիալիստ-յեղափոխական եւ Սոցիալիստ-դեմոկրատ Մենշեւիկ կուսակցութիւնները: Տե՛ս նաեւ «Բագուի հերոսամարտը», էջ 115:

[26] «Ռոստոմ» (Բէյրութ, Հրատ. Հ.Յ.Դ. Համազգայինի, «Վահէ Սեթեան» տպարան, 1979), էջ 208:

բանակայինները յետագային միացան Ռոստոմի նախաձեռնած զօրաշարժին՝ Բաքուի հայ բնակչութեանը թուրք բանակի դէմ պաշտպանելու:

Բնական է, որ Բաքուի տարազան բնակչութեան մէջ կարող էին անհամաձայնութիւններ եւ բախումներ առաջանալ, բայց թէ՛ Բաքուի Խորհուրդի եւ թէ նրա գործադիր մարմնի մէջ կար համագործակցութիւն եւ դա՝ մեծաւ մասամբ բոլշեւիկ ղեկավար՝ Պրոկոֆի (Ալեօշա) Ձափարիձէի տարած համերաշխ գործունէութեան քաղաքականութեան շնորհիւ:

Բաքուի վարչական այս դրուածքը խախտուեց երբ Ստեփան Շահումեանը, որպէս Բոլշեւիկ Ռուսաստանի ներկայացուցիչ եւ Կովկասի Յատուկ Կոմիսար, 1918-ի Փետրուարի կէսերին Բաքու հասաւ: Շահումեանի ներկայութեամբ բնականաբար բարձրացաւ բոլշեւիկեան ազդեցութիւնը Բաքուի Խորհրդի մէջ:

Դաշնակցութիւն-Բոլշեւիկ համագործակցութիւնը յամենայնդէպս շարունակուեց: Դաշնակցութեան նպատակը՝ թուրքական վտանգի դէմ հայ բնակչութեան պաշտպանելն էր. իսկ Շահումեանի տեսանկիւնից դատելով, Դաշնակցութիւնը զինուորական ուժ ունէր, որին ինքը կարիք ունէր: Խորհրդահայ պատմաբան՝ Լենդրուշ Խուրշուդեանը Ասկանազ Մռաւեանին յղում կատարելով հաստատում է թէ «երբ 1918 թուականին Բաքուն կռուում էր թուրքերի դէմ, եւ հիւսիսային Կովկասում ստեղծուում էին դաշնակցական կոմիտէներ, Բաքուի համար կամաւորներ հաւաքագրելու նպատակով, ինքը՝ Մռաւեանը ընկ. Շահումեանից հրահանգ է ստացել աջակցել այդ դաշնակցական կազմակերպութիւններին՝ նրանց Բաքուի պաշտպանութեան գործում օգտագործելու համար»[27]: Սա ի հարկէ Շահումեանի համար գործնական օգտակարութեան բնոյթ էր կրում, որ հակասում էր իր սկզբունքներին եւ անդադար կոչերին, այն է՝ սովետների եւ ոչ ազգային կառոյցների շուրջ համախմբուել: Նման մի կոչում նա ցաւ է յայտնում թէ, «… ռեւոլիւցիոն սովետների փոխարէն մենք ունենք ռէակցիոն բուրժուական կամ կալուածատիրական ազգային խորհուրդներ [ընդգծումը բնագրից], որոնք ազգային կառավարութիւնների դեր են խաղում: Ինտերնացիոնալ սովետական կարմիր գուառդիայի փոխարէն մենք ունենք ռէակցիոն տարրերի կողմից ղեկավարուող ազգային գնդեր»[28]: Այդ սկզբունքային նկատառումը ժամանակի եւ իրավիճակի թելադրանքով նա պիտի մի կողմ դնէր:

Բաքուի հայ բնակչութեան ինքնապաշտպանութեան համար 1918-ի Մարտ 5-ին կազմուեց գերագոյն զինուորական մարմին: Կազմին մասնակցում էին հայ սպաներ՝ գնդ. Բախտամեանը, գնդ. Ղազարեանը եւ Խանասորի Վարդանը: Հայերի այս զօրաշարժը մեծ դժգոհութիւն առաջացրեց Բաքուի Գործադիր Կոմիտէի անդամ մուսաւաթականների մէջ: Հայ գումարտակների զօրահանդէսը աւելի գրգռեց նրանց թշնամանքը: Ռասուլզադէի բորոքը, ուր նա դատապարտում էր Շահումեանին՝ հայերի կողմը բռնելու եւ ազգային հակումներ ցոյց տալու համար,

---

[27] Լ. Խուրշուդեան, *Սովետական Ռուսաստանը եւ Հայկական Հարցը*, Երեւան: Հայաստան հրատարակչութիւն, 1977, էջ 128:

[28] Շահումեան, *«Երկեր»*, էջ 66:

հրատարակուեց կենտրոնի պաշտօնական օրգան՝ «Իզվեստիա» թերթում: Շահումեանը ինքնարդարացման նպատակով խոստացաւ ցրել հայկական զօրամասերը ու նոյնիսկ Ազգային Խորհուրդը ու բացատրեց, թէ հայ բոլշեիկները ի սէր աշխատաւոր մասսաների այդ ազգային միաւորումների դէմ են պայքարում ամբողջ Կովկասում[29]: Բայց այդ օրերին, մուսաւաթականները արդէն հետաքրքրութիւն չունէին Գործադիր Կոմիտէի մէջ մնալու եւ աստիճանաբար հեռացան՝ իրենց փան-թուրանական նպատակները իրագործելու:

1918-ի Մարտ 18-ին թաթարները, Մուսաւաթի գլխաւորութեամբ Բաքուի Բոլշեւիկ իշխանութեան դէմ ապստամբութեան դուրս եկան եւ շուտով յարձակումները դէպի Բաքուի հայ բնակչութիւնը ուղղուեցին: Համազասպի հայկական ջոկատը պաշտպանութեան դիմեց. միայն հայ զօրամասերի ուժին չյենուելու համար, Շահումեանը նաւատորմի մի քանի բոլշեւիկ նաւերի ուժին դիմելով «Յեղափոխական Պաշտպանութեան Կոմիտէ» կազմեց՝ իր, Ջափարիձէի եւ Գրիգոր Կորգանովի (Ղորղանեան) ղեկավարութեամբ: Մի քանի օրում հնարաւոր դարձաւ թաթարներին յետ մղել:

Ապրիլ 13-ին Սովնարկոմին գրած մի երկար զեկոյցում, Շահումեանը ընդունում էր, որ հայկական զօրամասերը մեծ օգնութիւն էին Բաքուի պաշտպանութեան մէջ, բայց «Դաշնակցութեան պարտիային, թէեւ նա մեզ առայժմ պաշտպանում էլ է ամէն բանում, առայժմ ոչինչ մի խոստացէք եւ ոչինչ մի տուէք: Նրանց ուժեղացնել այլեւս պէտք չէ»[30]: Շահումեանի այս կողմնորոշումը ամբողջովին համընկնում էր Մոսկուայում կազմուած Հայկական Գործերի Կոմիսարիատի հայ բոլշեւիկ ղեկավարների քաղաքականութեանը, որ յստակ հակազգային, հակադաշնակցական ուղղութիւն ունէր, դէմ էր Կովկասի ազգային բաժանումներին եւ պիտի թշնամական կեցուածք ցուցաբերէր անկախ Հայաստանի գաղափարին եւ գործէր նրա գոյութեան դէմ: Հայաստանի անկախութիւնից յետոյ, նոյն ոգով, Սովետների հինգերորդ համագումարը, 1918 Յուլիսին կազմուած, որոշում է կայացնում «դաշնակների ամէն տեսակ գործունէութիւնը դիտել որպէս դաւաճանութիւն»[31]: Այս բոլորով հանդերձ, Շահումեանը մեծ համարում ունէր Ռոստոմի նկատմամբ, որի դերը Բաքուի իրարու դէմ ելած խմբակցութիւնների միջեւ միասնութիւն ստեղծելու մէջ անժխտելի էր:

Բաքուի յաջող պաշտպանութիւնից ոգեւորուած, Շահումեանը ձգտում էր պայքարել «մուսուլմանական նացիոնալիստների» եւ «հայ նացիոնալիստների քաղաքականութեան դէմ» եւ ամբողջ Կովկասում խորհրդային կարգեր հաստատել: Այդ նպատակի իրագործման ճանապարհին, Ապրիլ 8-ին լուծարուած էր յայտարարել բոլոր ազգային խորհուրդները, իսկ ազգային զօրագնդերը պիտի լուծարուէին կամ յանձնուէին Ռազմա-Յեղափոխական Կոմիտէին: Հրամանը կատարուել էր:

---

[29] Նոյն տեղում, էջ 100-101:

[30] Նոյն տեղում, էջ 143-147:

[31] Գաբրիէլ Լազեան, *Հայաստան եւ Հայ Դատը,* վերահրատարակութիւն, Թեհրան: Արմէն հրատարակչական, 1985), էջ 196: Մէջբերումը կատարուած է Վ. Ի. Լենինի «Երկեր», հատոր 35-ի էջ 377-ից:

Համազասպի կազմակերպած հայկական զօրամասերը Կարմիր Բանակի մէջ էին առնուել: Այսպիսով, Բաքուում տիրում էր բոլշեւիկեան իշխանութիւն եւ ղեկավարում Բաքուի Ժողովրդական Կոմիսարների Սովետի միջոցով, որին նախագահում էր Շահումեանը: Բաքուն «աշխատանքային կոմունա» էր դարձել:

Այնուամենայնիւ, Բաքուում շարունակւում էին թաթարների խլրտումներն ու յարձակումները հայ բնակչութեան վրայ: Տարածուել էր օսմանեան բանակի առաջխաղացման լուրը եւ թաթարները ոգեւորուած այս անգամ թուրքերի օգնութեան էին սպասում: Բաքուի բոլշեւիկ իշխանութիւնը մեծ բանակ էր կազմակերպում օսմանեան բանակին դէմ դնելու համար, որից յետոյ պիտի անցնէր Գանձակ եւ Թիֆլիս՝ խորհրդային կարգեր տարածելու ամբողջ Անդրկովկասում:

Մայիսի կէսերին Բաքուում կազմակերպուած բանակը Զօր. Յակոբ Բագրատունիի ղեկավարութեամբ թաթարներին սանձելով շարժւում է դէպի Գանձակ, ուր մուսաւաթականների ուժն ու ազդեցութիւնն էր կենտրոնացած: Շահումեանը իր նպատակն էր հետապնդում, իսկ հայկական գումարտակը գնում էր թուրքերից վրէժ լուծելու եւ Թիֆլիսի վրայով Հայաստանին օգնութեան հասնելու:

Բայց դէպքերը Բաքուից անդին տարբեր ընթացք էին ստանում: Շահումեանը դժգոհ էր: Յունիս 23-ին Լենինին յղած նամակում գրում է, «Մեր դրութիւնը միջազգային տեսակէտից իսկապէս սոսկալի է: Անկախ Վրաստան, անկախ Ազրբէյջան, որպէս թէ անկախ Հայաստան»[32]:

Յունիս 5-ին սկսել էր Բաքուի բանակի հակա-յարձակողական գործողութիւնը թուրք-ազրբէյջանական ուժերի դէմ: Բաքու էր հասել նաեւ Լազար Բիչերախովը իր զօրամասով եւ Բաքուի պաշտպանութեան պետ էր նշանակուել: Բիչերախովի գալը մեծ ոգեւորութիւն էր ստեղծել. բայց թուրք ռազմական գործողութիւնները ուժեղ էին:

Յեգնանքն այտեղ է, որ միեւնոյն ժամանակ երբ Շահումեանը Թուրքիայից սպառնացող վտանգի մասին անդադար զեկոյցներ էր յղում Մոսկուա եւ թուրք-գերմանական համաձայնութիւնը Կովկասի խորհրդային իշխանութեան ամենամեծ թշնամին էր համարում, երբ Բաքուի պրոլետարիատի անունից երդւում էր ո՛չ մի կաթիլ նաւթ չտալ թուրքերին, Լենինը թուրքերին բարեկամութեան ձեռք մեկնած համաձայնութիւններ էր կնքում եւ գերմանացիներին Բաքուի նաւթից խոստանում: Նա լուր է ուղարկում Շահումեանին, որ գերմանացիները Բեռլինում Ռուսաստանը ներկայացնող Ադոլֆ Եօֆֆէին խոստացել են արգիլել թուրքերի յարձակումը Բաքուի վրայ եթէ նաւթ տրուի իրենց[33]: Եւ իրօք, Մայիս 31-ին Եօֆֆէն բողոքել էր Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը խախտելու եւ Անդրկովկասեան երկաթուղու անօրինական օգտագործման կապակցութեամբ: Իրականութեան մէջ այդ գնացքներով թուրք բանակն էր դէպի Բաքու փոխադրւում[34]: Ըստ ռուս-գերմանական գաղտնի համաձայնութեան, Գերմանիան ընդունում էր Ռուսաստանի իշխանու-

---

[32] Շահումեան, *«Երկեր»*, էջ 324:

[33] Նոյն տեղում, էջ 143-147:
«Հայաստան և Հայ Դատը», էջ 196:

[34] Hovannisian Richard G., *Armenia on the Road to Independence*, էջ 217-18:

թիւնը հարաւային եւ արեւելեան Կովկասում եթէ իրեն տրուէր Վրաստանի հովանաւորութիւնը եւ նաւթ Բաքուից: Բոլշեւիկ Ռուսաստանը չէր դադարել Հայաստան, Ազրբէյջան, Վրաստան հանրապետութիւնների բաժանուած Կովկասը իր ներքին գործը համարելուց: Այդ ծիրի մէջ Ստալինը Շահումեանին յղած Օգոստոս 8 թուակիր նամակում իր եւ Լենինի կողմից յայտնում էր, թէ պիտի ստիպի Գերմանիային ընդունել այդ իրողութիւնը եւ եթէ Ռուսաստանը պարտաւոր լինի Վրաստանը զիջելու, ապա՝ միւս երկուսը չի զիջի[35]:

Չնայած Լենինի հաւաստիացումներին թուրքական յարձակումները աւելի էին ուժգնացել: Այս անգամ, Էնվերի եղբայր՝ Նուրի Փաշան հայատեաց մոլուցքով դէպի Բաքու՝ տեղի թաթարներին եւ Խալիլ Փաշայի հրամանատարութեան տակ կռուող ու Բաքուի դռներին մօտեցած թուրք բանակին օգնութեան էր շտապում: Վտանգաւոր իրավիճակը եւ անհաւասար կռուի հեռանկարը տեսնելով, Բիչերախովը իր զօրամասը առած Յուլիս 26-ին դիրքերը թողեց ու հեռացաւ:

Բաքուի պաշտպանութիւնը միայն ներքին ուժերով հնարաւոր չէր: Շահումեանը դիմել էր Մոսկուային ռազմական օժանդակութիւն ուղարկել: Կարելիութիւններից մէկն էլ անգլիացիներին դիմելն էր, որին դէմ էր Շահումեանը: Նրա կարծիքով դա նշանակում էր հրաժարուել Ռուսաստանի, Բաքուի եւ Անդրկովկասի անկախութիւնից[36]: Բացի այդ, նա կասկածում էր, որ անգլիացիները մեծ ուժ կը տրամադրեն եւ շահագրգռուած կլինեն կռուել Անդրկովկասում խորհրդային իշխանութիւն հաստատելու համար[37]:

Բաքուի Սովետի Յուլիս 25-ի ընդլայնուած արտակարգ նիստում հարց բարձրացուեց անգլիացիների օգնութեանը դիմելու մասին: Գերակշռող էր այն կարծիքը, թէ անգլիացիները պիտի հրաւիրուեն Բաքուի պաշտպանութեանը օժանդակելու: Այդ պայմաններում Բաքուի իշխանութիւնը պիտի հրաժարուէր Կենտրոնական Սովետական իշխանութիւնը ճանաչելուց եւ կոալիցիոն կառավարութիւն պիտի կազմուէր: Շահումեանը չկարողանալով կարծիքները իր կողմ թեքել, զայրոյթով ներկայացրեց Կոմիսարիատի հրաժարականը: Նրա կարծիքով, Դաշնակցութիւնը դաւաճանել էր իրեն եւ իր քուէով նժարը բոլշեւիկ իշխանութեան դէմ էր թեքել[38]: Իսկ Մոսկուայի խոստացած զօրքը ուշանում էր: Ըստ Գաբրիէլ Լազեանի, Շահումեանը Յուլիս 29-ին Լենինից նամակ էր ստացել ուր նա գրում էր, «զօրքեր ուղարկելու նկատմամբ միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապէս խոստանալ չենք կարող»[39]:

Յուլիս 30-ին Շահումեանը Բանուորա-զինուորա-նաւաստիների Խորհրդի արտակարգ նիստ է հրաւիրում Ժողկոմսովետի հրաժարման մասին բացատրութիւն տալու համար: Ըստ Սերգէյ Մելիք-Եօլչեանի, քաղաքում տիրող խուճապի պատճառով, 300 անդամներից ներկայ են լինում 70-80 հոգի միայն: Այդ նիստում

---

35 «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 159:

36 Շահումեան, «Երկեր», էջ 360:

37 Նոյն տեղում, էջ 369:

38 Նոյն տեղում, էջ 387-90:

39 *«Հայաստան եւ Հայ Դատը»*, էջ 196:

Շահումեանը ներկայացնելով իրավիճակը, դրա պատասխանատուութիւնը բարդում է դաշնակցականների վրայ եւ նրանց դաւաճան որակում[40]: Իսկ ժողովրդին բացատրութիւն տալու համար, յայտարարում է, թէ քանի որ քաղաքի յանձնումը անխուսափելի է, «Չցանկանալով խանգարել բնակչութեանը՝ օգտագործել վերջին միջոցը՝ յաղթողի գթասրտութեան անձնատուր լինելու ցանկութիւնը, Ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշեց հրաժարուել»[41]: «Հայրենիք» ամսագրի իր յօդուածում Մելիք-Եօլչեանը յիշում է իր բողոքը Շահումեանին՝ Բաքուի հայ բնակչութեան սպառնացող վտանգին ի տես նրա հրաժարուելու եւ հեռանալու կապակցութեամբ: Շահումեանը պատասխանում է, «Մենք կատարում ենք համաշխարհային յեղափոխութիւն, որի ժամանակ ժողովուրդներ ու ազգեր կարող են ոչնչանալ: Ի՞նչ ցաւ, եթէ սոցիալիզմը իրագործելու համար անգամ հայ ազգը զոհուի»: Նոյնանման արտայայտութիւն է վկայագրում Գրիգոր Ամիրեանը: Նրա ասութեամբ, Սեպուհի եւ Մուրադի հետ հանդիպման ընթացքում, Շահումեանը նորից անգլիացիներին հրաւիրելու դէմ է խօսել՝ տրամաբանելով, որ եթէ անգլիացիները մտնեն այլեւս չեն հեռանայ Բաքուից, իսկ թուրքերին ռուսները կարող են դիւրութեամբ հեռացնել: Իսկ երբ նրան հարց են տուել, թէ հապա ի՞նչ կլինի հայերի վիճակը եթէ թուրք բանակը Բաքու մտնի, Շահումեանը պատասխանել է, «Համաշխարհային յեղափոխութեան յաղթանակի համար ի՞նչ նշանակութիւն ունի հայ ժողովրդի գոյութիւնը»[42]: Յիշենք որ յայտնի ֆիդայիներ՝ Սեպուհը եւ Մուրադը Վոլգայի ափերից Բաքու էին եկել յատկապէս հայ բնակչութեան պաշտպանութեանը մասնակցելու:

Անհաւատալի է լենինեան քաղաքականութեան զոհ, այս մոլեռանդ բոլշեւիկի վարած քաղաքականութիւնը եւ որքան դիպուկ Ռուբէն Խուրշուդեանի դիտարկումը՝ «Հայ բոլշեւիկները կուրօրէն հետեւեցին լենինեան քաղաքականութեանը եւ օբիեքտիւօրէն ուղի հարթեցին սեփական ժողովրդի կործանման համար»[43]:

Անելանելի իրավիճակում որոշում է քաղաքը յանձնել արդէն 15 մղոնից սպառնացող Նուրի Փաշայի զօրքին: Ժողկոմսովետը հրաժարուելով իր լիազօրութիւններից, գոյքեր, ռազմամթերք, զինուորական հագուստեղէն, բանկային հարստութիւն եւ այլն նաւերի վրայ բարձած հեռանում է քաղաքից: Նոյն գիշեր, Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէի ժողովը լուր առնելով, որ Պարսկաստանում տեղակայուած Լայընլը Դանստըրվիլի զօրքը պատրաստ է օգնութեան գալու, որոշում է քաղաքը չյանձնել եւ շարունակել պաշտպանութիւնը: Միեւնոյն ժամանակ Կասպից Ծովի ռազմական նաւատորմի կենտրոնական կոմիտէն Բաքուում մնացած նաւատորմի մասնակցութեամբ ստեղծում է «Դիկտատուրա Կասպիան Նաւատորմի» (Ցենտրոկասպիայի դիկտատուրա): Կազմին մասնակցում են հայ ներկա-

---

[40] Մելիք-Եօլչեան, *Բագուի Հերոսամարտը*, «Հայրենիք » ամսագիր, գ. Տարի, թիւ 9, Յուլիս, 1925:

[41] Շահումեան, *«Երկեր»*, էջ 397:

[42] Տե՛ս Գրիգոր Ամիրեանի յօդուածը *«Ռոսպում»* հատորում, էջ 389:

[43] Տե՛ս Ռուբէն Խուրշուդեանի «Եղեռնը եւ Բոլշեւիզմը» յօդուածը «Հայոց Ցեղասպանութիւն, Պատճառներ եւ դասեր» հատորում՝ «Անլռելի Ձանգակատուն» Մատենաշար (Երեւան, հրատարակութիւն Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրութեան Կենտրոնի, 1995), էջ 21-35:

յացուցիչներ՝ Ալեքսանդր Առաքելեան, Սերգէյ Մելիք-Եոլչեան, Աւետիս Օհանջանեան, յետոյ՝ Ռոստոմ[44]:

Բաքուն պաշտպանելու մի վերջին ճիգով, բանակը եւ հայկական զօրամասերը դէմ են դնում Նուրի Փաշայի յարձակմանը: Այդ կռւում զոհւում են մեծ թուով հայ մարտիկներ: Դրանց մէջ էր նաեւ Մուրադը (Սեբաստացի): Յուլիս 31-ին սկսած կռուին Օգոստոս 5-ին գալիս է միանալու անգլիացի Ստոքսը իր 40 զօրականներով՝ զարմանք եւ յուսախաբութիւն պատճառելով ղեկավարութեանը: Յետոյ հասնում են մի երկու այլ զօրամասեր, ընդհանուր 1500-2000 զինուոր: Դանստըրվիլի խոստացած ուժերը Բաքու չեն հասնում: Միջագետքի անգլիական ուժերի ընդհանուր հրամանատար զօր. Մարշըլը դէմ էր Բաքուի գործողութեանը[45]: Իսկ նոյն օրերին, Օգոստոս 26-ին, Բաքւում հրատարակուել էր Ռուսաստանի ժողովուրդներին ուղղուած Անգլիայի արտաքին գործոց նախարար Արթըր Բալֆուրի կոչը, ուր նա պաշտպանում էր Ռուսաստանի ամբողջականութիւնը եւ դատապարտում նրա անդամահատութիւնը[46]:

Հայերի վերջին կոտորածը 1914-1918 պատերազմական ժամանակահատուածում

Օգնական ուժեր ստացած թուրքական զօրքը Օգոստոս 29-ին նոր յարձակման է դիմում: Անհաւասար կռւում մէկ առ մէկ ընկնում են Բաքուի պաշտպանութեան դիրքերը: Ստացւում է քաղաքը յանձնելու վերջնագիր, ի հարկէ, հաւաստիացնելով, որ հայ բնակչութեանը վտանգ չի սպառնում եւ եթէ ցանկանան կարող են հեռանալ քաղաքից: Սեպտեմբեր 15-ին, երբ հայկական թաղերը վառւում էին կրակների մէջ, Ցենտրոկասպիայի Դիկտատուրան հեռանում է քաղաքից: Հեռանում են նաեւ հայ ղեկավարութեան մեծ մասը, իսկ թուով 163.000 ոչ-մուսուլման բնակչութիւնից 50.000-ը միայն: Դրանցից առաջ անգլիական զօրամասերը սպառնացող վտանգի տակ Պարսկաստան էին անցել:

Յատկանշական է, որ օսմանեան բանակը Բաքուի դռներին կանգնած սպասել էր՝ տեղի թաթարներին առիթ տալով, որ իրենց աւանդական կողոպուտի ու սպանդի բաժինը առանձին վայելեն: Թուրք եւ թաթար զօրախմբերը մուսուլման բնակչութեան միացած շարունակում են անասելի վայրագութիւնները մինչեւ յաջորդ օր երբ յաղթական զօրքը քաղաք է մտնում: Կատարուած ամենապահպանողական հաշուարկով, 70-80 հազար հայ բնակչութիւնից զոհուել էր 30.000-ը:

Բաքուի գրաւման մասին հետաքրքիր բացայայտումներ է կատարում Վահագն Տատրեանը: Ըստ պատմագէտին, խուսափելու համար Բրեստ-Լիտովսկի համա-

---

[44] Այս մասին վկայում է Մելիք-Եոլչեանը «Հայրենիք» ամսագրի իր յօդուածում, ինչպէս նաեւ Սիմոն Վրացեանը՝ «Հայաստանի Հանրապետութիւն» ում, էջ 170-71:

[45] Kazenzadeh Firuz, *The Struggle for Transcaucasia, 1917-1921,* (New York: Philosophical Library, 1951, էջ 140: Հեղինակը օգտագործել է Դանստըրվիլի 1932-ին հրատարակած *The Adventures of Dunsterforce* –ը:

[46] Տե՛ս Մասուրեան Ս., «Ռուսաստանը բեկման շրջանում», «Հայրենիք » ամսագիր, Ե. Տարի, թիւ 12, Հոկտեմբեր, 1927:

ձայնագիրը խախտած լինելու մեղադրանքից, Էնվերը իր բնակարանում տեղադրուած գաղտնի հեռագրով կարգադրում է Խալիլ Փաշային Բաքուն գրաւել: Ապա՝ երբ Խալիլ Փաշան Բաքուի գրաւման լուրն է հաղորդում կենտրոնին, Էնվերը պաշտօնական հեռագրով կշտամբում է նրան եւ կարգադրում Կարս վերադառնալ. իսկ գաղտնի հեռագրով շնորհաւորում է նրան եւ իր խնդակցութիւնը յայտնում: Բաքուի գրաւման փաստի առջեւ կանգնած, գերմանացիները մի ձիաւոր ջոկատ են ուղարկում՝ հայերի ջարդը կասեցնելու համար, բայց թուրքերը մի երկու կամուրջ պայթացնելով արգիլում են նրանց մուտքը քաղաք[47]:

Դարձեալ, ի՞նչ էր Մոսկուայի հակադարձը: Օսմանեան արտաքին գործոց նախարարութեան յղած Սեպտեմբեր 20-ի թուակիր մի երկար բողոքագրով, Չիչերինը դատապարտում էր Բաքուի ոչ-մահմեդական բնակչութեան ջարդը եւ յիշեցնում Կարսի, Արդահանի եւ Բաթումի բնակչութեան կոտորածները[48]: Միեւնոյն ժամանակ նա կարգադրում է Եօֆէին Բեռլինում գերմանացիներին բողոք ներկայացնել թուրքերի կողմից Բրեստ-Լիտովսկի համաձայնագրի խախտման կապակցութեամբ ու յիշեցնել թուրք բանակի վայրագութիւնները Կարս-Արդահան-Բաթում գծի վրայ եւ մինչեւ Բաքու: Իսկ Թալէաթը Բեռլինում փորձում էր Անդրկովկասում թուրքական աւելի մեծ ազդեցութիւն եւ միջամտութեան իրաւունք ապահովել: Բաքուի (նաթահորերի) գրաւումով այս անգամ արդէն խորհրդային շահերն էին խնդրոյ առարկայ: Բայց դրա լուծումը պիտի մնար յետագային՝ երբ Կարմիր Բանակը ներս կը մտնէր՝ Ազրբէյջանի անկախութիւնը տապալելու եւ նաթահորերին տէր կանգնելու:

Ռուսեւգերման եւ ռուսեւթուրք բանակցութիւնները շարունակուեցին: Արծարծուեց Չիչերինի յղած վերջնագիրը: Սովնարկոմը չեղեալ յայտարարեց Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը: Բայց, դէպքերը այլ ընթացք էին ստացել: Մօտալուտ էին Քառեակ զինակցութեան պարտութիւնը, Երիտթուրքերի կառավարութեան անկումը եւ Մուդրոսի զինադադարը: Հաստատուած իրողութիւնը այն էր սակայն, որ Բաքուից վռնտուել էին թուրքին ատելի հայերը եւ բոլշեւիկները եւ Ազրբէյջանի անկախ հանրապետութեան մայրաքաղաքը Գանձակից Բաքու էր փոխադրուել:

Քաղաքական եւ դիւանագիտական խառնակ իրավիճակը իրենց շահին օգտագործելով, թուրք բանակը եւ թուրքի դրդումներով աւելի հայատեաց դարձած թաթարները կարողացան իրականացնել Երիտթուրքերի նիւթած ցեղասպանութեան այս վերջին գործողութիւնը եւս Բաքւում Պատերազմը աւարտին չհասած:

Հետեւութիւններ

Գրչի արագ հարուածով փորձեցի նկարագրել իրավիճակն ու կարեւոր իրադարձութիւնները՝ 1917, Հոկտեմբեր (Նոյեմբեր) – 1918, Սեպտեմբեր ճակատագրական ժամանակաշրջանում՝ ներկայացնելու համար այն հակադիր ուժերը որոնց ներ-

---

[47] Dadrian Vahakn, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence, Oxford: Berghahn Books, 1995), էջ 385:

[48] Հ.Հ.Կ.Պ.Պ.Ա. ֆոնտ 200, ցուցակ 1, գործ 80, էջ 60-62:

գործումը եւ անհաշտ բախումները Անդրկովկասում եկան դիւրացնելու թուրքի ցեղասպանական գործողութիւնների շարունակականութիւնը. Այս անգամ Օսմանեան Կայսրութեան տարածքից անդին՝ Անդրկովկասում, մինչեւ վերջինը՝ Բաքուի հայ բնակչութեան դէմ՝ նախքան Պատերազմի աւարտը:

Նկարագրութեանս ընդմիջից արտացոլում գտած հայ ժողովրդի գոյութեան եւ նրա ազգային շահերի դէմ գործող կարեւոր ազդակները ցանկագրութեան պէս ներկայացնում եմ ներքեւում:

- Բոլշեւիկեան յեղափոխութիւնը, որին հետեւեց կովկասեան ճակատի պարպումը, որը եւ Արեւմտահայաստանի անկման կարեւոր պատճառը դարձաւ.
- Ապա՝ Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը, որը թուրքերին ազատութիւն տուեց հայկական հողերի վրայ առաջանալու եւ աւէր ու կոտորած գործելու:
- Լենինեան քաղաքականութեան անտարբեր կեցուածքը դէպի հայկական հարցը եւ Չիչերինի անարդիւնք, որոշ չափով էլ ձեւական բողոքները գերմանացիներին ու թուրքերին ուղղուած՝ ի հակադարձութիւն թուրք բանակի ոտնձգութիւններին: Այդտեղ էլ Հայկական Հարցը բոլշեւիկների ձեռքում խաղաքարդ էր միայն:
- Սովնարկոմի կամ Լենինի հետապնդած քաղաքականութիւնը, որի գործադիր ձեռքերն էին ու դեռ աւելի հրահրողը Ստեփան Շահումեանը Կովկասում եւ Հայկական Գործերի Կոմիսարիատը Մոսկուայում: Այս վերջինս իր գոյութեան նպատակից շեղուելով, իր ծաւալած գործունէութեամբ դարձաւ հայ ժողովրդի ազգային շահերի եւ անկախութեան պայքարի դէմ բարձրացած պատնէշ:
- Կովկասի ժողովուրդներին եւ Բաքուի նաւթին կապուող գերման-բոլշեւիկ գաղտնի համաձայնութիւնները:
- Հայ բոլշեւիկների մոլեգին անհանդուրժողութիւնը Դաշնակցութեան եւ նրա իւրաքանչիւր նախաձեռնութեան դէմ: Այս վարքագիծը ընդհանրապէս գործում էր ի շահ բոլշեւիզմի տարածման եւ ինտերնացիոնալիստական պրոլետարական յաղթանակի եւ ի վնաս հայ ազգային շահերի:
- Անհանդուրժող մուսաւաթականների եւ թուրքերի կողմից գրգռուած թաթարների խլրտումներն ու ահաբեկչութիւնները՝ անջատ սպանդներ ու կողոպուտ:
- Դարձեալ թաթարների յարձակումներ երկաթուղագծի վրայ որ արգելք դարձաւ հայ բանակայինների համախմբումն ու փոխադրութիւնը կովկասեան ճակատ:
- Անդրկովկասի երեք ազգութիւնների՝ վրացիների, հայերի եւ թաթարների միջեւ անլուծելի հարցերը՝ խառն բնակչութիւն, հողային պատկանելիութեան եւ սահմանային հարցեր, քաղաքական եւ դիւանագիտական ասպարէզում միասնութեան բացակայութիւն: Վրացի ղեկավարների շեշտուած ազգայնականութիւնը, որ Անդրկովկասի բարձր ղեկավարութեան իրենց դիրքերից, ընդհանուր շահերը զոհում էին վրացական շահերին: Ապա՝ մուսուլման ժողովուրդների մէջ քաղաքական նպատակներով հակա-քրիստոնեայ միտումների հրահրումը, որ բերում էր գրգռութիւնների, անկարգութիւնների եւ խլրտումների:
- Դաշնակից պետութիւնների անտարբեր կեցուածքը դէպի կովկասահայութիւնը եւ մանաւանդ անգլիական քաղաքականութիւնը Կովկասում:
- Բաքուի ղեկավարութեան սխալ որոշումը անգլիական ուժեր հրաւիրելու: Դրա

հետեւանքով, բացի այն որ անգլիացիները կռուի ընթացքի վրայ որեւէ ազդեցութիւն չունեցան, նրանց ներկայութիւնը նախ՝ պատրուակ էր թուրքերի համար Գերմանիոյ օրհնութեամբ Բաքու մտնելու՝ Դաշնակիցներին Անդրկովկասից վտարելու համար, եւ յետոյ, առիթ՝ Բաքուի Կոմիսարիատի համար հրաժարուելու եւ քաղաքից հեռանալու:

Աշխարհաքաղաքական այս բարդ ու իրարամերժ իրադարձութիւնների յորձանուտի մէջ բռնուած հայ ժողովուրդը տանուլ տուեց՝ թէ՛ իր անկախութեան կործանման եւ թէ թուային կորստի տեսակէտից: Այստեղ, ի հարկէ, անարդար կլինի բացառել ներքին ու արտաքին ոլորտներում թոյլ տրուած սխալները: Բայց պէտք է նաեւ տեսնել հայ ժողովրդի ազգային շահերի ընդհուպ մինչեւ նրա գոյութեան դէմ բոլշեւիկեան ամբողջատիրական ծրագրերի եւ թուրքական փան-թուրանական ձգտումների ներգործութիւնը, եւ մանաւանդ՝ այդ երկու հզօր ուժերի ժամանակաւոր զօրակցութիւնը:

Հաւատալով Ջորջ Սանթայեանայի այն արտայայտութեան, թէ "Those who cannot remember the past are condemned to repeat it"[49] (նրանք ովքեր չեն կարողանում յիշել անցեալը դատապարտուած են այն կրկնելու), եւ որպէսզի անցեալի սխալները չկրկնուեն, այս սեղմ ու հպանցիկ զեկոյցս եզրափակում եմ «Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում 1917-1921» աշխատութեանս վերջին հաստատումս կրկնելով:

Պատմութեան մէջ պարզապէս խորանալ եւ նրանից դասեր քաղել է պէտք[50]:

ՀԱԿԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵԿԱՆ ԴԻՒՐԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՐՔԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԵՒՍ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ՝ ՆԱԽՔԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՒԱՐՏԸ

Ռուբինա Փիրումեան

ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլշեւիկեան յեղափոխութեանը հետեւող քառսային մթնոլորտում, կովկասեան տարաբնոյթ եւ իրարամերժ ուժեր իրենց ազդեցութեան դաշտը տարածելով առճակատման անցան՝ իւրաքանչիւրը նախկին Ցարական կայսրութեան կովկասեան նահանգների տարածքային եւ ժողովրդագրական վերաբաժանումներն ի շահ իրեն իրականացնելու: Մուսաւաթականներ, հայ բոլշեւիկներ, Բոլշեւիկ Ռուսաստանի կենտրոնական իշխանութեան քաղաքականութիւնը վարող Բաքուի Սովնարկոմ, գերմանացիների եւ անգլիացիների դերակատարութիւն, բոլշեւիկների գաղտնի համաձայնութիւններ՝ գերմանացիների եւ Երիտթուրքերի հետ, մոլեռանդ թաթարների շարունակական յարձակումներ հայերի դէմ, ահա՛ կարեւորները այն գործօնների, որոնց անյաղթահարելի համադրութիւնը եկաւ խոչընդոտելու հայ ժողովրդի գոյատեւման տենչն ու յարատեւման պայքարը եւ դիւրացրեց օսմանեան

---

[49] George Santayana, *The Life of Reason*, vol. 1 (1905), p. 284.

[50] «Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում 1917-1921», էջ 389:

բանակի յառաջխաղացքը դէպի Բաքու՝ իրագործելու համար օսմանեան վերջին ցեղասպանական գործողութիւնը հայերի դէմ՝ նախքան Պատերազմի աւարտը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանութիւն, Բոլշեւիկեան յեղափոխութիւն, Անդրկովկաս, Առաջին աշխարհամարտ:

CONFLICTING FACTORS AT WORK IN TRANSCAUCASIA FACILITATED THE CONTINUATION OF THE TURKISH GENOCIDE OF ARMENIANS BEFORE THE END OF WWI

Rubina Peroomian

ABSTRACT

In the chaotic atmosphere, after the Bolshevik revolution, conflicting factors went into play and fractions entered into open war against each other for the territorial and demographic redistribution of the former Tsarist Russia's provinces in Transcaucasia. The Musavatists, the Armenian Bolsheviks and the long arm of Moscow's central government, the Baku Sovnarkom, the Germans and the British presence, the secret agreements of Bolsheviks with the Germans and the Young Turks, the sporadic attacks and massacres of Armenians by fanatically religious Tatars, all worked to foil the Armenian quest for survival and paved the way for the Ottoman army to advance toward Baku to realize the last genocidal act against Armenians just before the end of WWI.

Keywords: Armenian Genocide, Bolshevik Revolution, Transcaucasia, First World War.

КОНФЛИКТНЫЕ ФАКТОРЫ В ЗАКАВКАЗЬЕ, ОБЛЕГЧИВШИЕ ПРОДОЛЖЕНИЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН ДО ОКОНЧАНИЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Рубина Пирумян

РЕЗЮМЕ

В хаотичной атмосфере после большевистской революции конфликтующие факторы и группировки вступили в открытое противостояние, вступив в игру против друг друга с целью территориально-демографического перераспределения провинций бывшей царской России в Закавказье.

Мусаватисты, армянские большевики и длинная рука центрального правительства Москвы, бакинский Совнарком, немцы и британское присутствие, тайные соглашения большевиков с немцами и младотурками, периодические нападения и погромы армян фанатично религиозно настроенными татарами– все эти факторы работали против борьбы армян за выживание, для того, чтобы проложить путь османской армии на Баку и осуществить последний акт Геноцида армян незадолго до окончания Первой мировой войны.

Ключевые слова: Геноцид армян, Большевистская революция, Закавказье, Первая мировая война.